



32

*Յոհաննես Գրիգորյան*

Ի ՆՊԱՍՏ ՀԻՄՆԵԼԻ ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱՆՈՅԻ

---

**ՉԵՌԱՅ ՏԵՏՐԱԿ**

**ՀԱՅ ԳԵՂՋՈՒԿ ՀԱՄԵՐԳԻ**

ՈՐ

Գ. Եկազարուքեանք

**ԿՈՄԻՏԵԱՍ Վ.Ս.Ր.Դ.Ս.ՊԵՏ**

Ե Ի

Սիրայոծար մասնակցութեամբ իր 300 երկստու  
երգիչներու

— > ◊ < —  
Կիրակի, Մարտ 20/2 Ապրիլ 1911, կես օրէ ետք  
ՃՇԴԱԳՈՅՆ Ժամը 2 (ը. և.)

**ԲԵՐԱ ԻՒՆԻՕՆ ՖՐԱՆՍԷՋԻ ՄՐԱԶ**

— > ◊ < —  
Խմբագրեց՝ համառօտ ներածութեամբ

**ԿՈՄԻՏԵԱՍ Վ.Ս.Ր.Դ.Ս.ՊԵՏ**

Կ. Պոլիս

---

**Արժանացելն արգիլեալ է**

Կոմիտաս Վարդապետի ստորագրութիւնը չը կրող  
օրինակներն անվաւր են:

---

## Ե Ր Կ Ո Ւ Ի Կ Օ Ս Ք

Հայ գեղջուկը բնագոյաբար բաժնուած է իր երգական երաժշտութիւնը երեք տեսակի՝

Ա. Բառ ասել,

Բ. Խաղ ասել եւ

Գ. Խաղ կանչել:

Ա. Բառ ասել կը նշանակէ բառ առ բառ ասել՝ հասիկ հասիկ հնչել՝ Եղանակաւոր պատմել. համագոր հնոց *Վիպ ասել* իմաստին: Յիրաւի, այս կարգի երաժշտական գրականութեան նիւթն է, բացառապէս, հին եւ նոր ժողովրդական անգիւր վիպասանութիւնը: Որովհետեւ վէպերը կը պատմուին գեղջուկի հանգստեան օրերուն՝ ձմեռուան երկար գիշերներուն եւ խրճիթներու մէջ հասած, ուսի *նսաւանց* եւս կասեն: *Նսաւանց* վէպերը *բառ ասելու* պահուն ունկնդիրներն, առ հասարակ, բոլորովին խորհրդաւոր լուսիւն կը պահեն, ջերմեանդ հաւաւսացեալի տեսք կ'առնեն եւ ակնապիշ կ'ունկնդրեն գեղջուկ գուսանի հնչիւն բերանով խօսող անցեալն ու ներկան:

Այս ձեւը կը պարունակէ հայ գեղջուկ երաժշտութեան շարերը՝ բառերի հնչական ելեւէջը՝ *հիմնա-*

ձայն, շօշ եւ թուր, եւ սաղազափութեան հիմունքները՝ վանկերի սոսնակը՝ սուղ եւ երկար: Բառ սակռու էլեւէջն անկայուն է, իսկ ամանակը՝ հաստատուն:

**Բ. Խաղ առել** կը նշանակէ՝ խաղաւոր, սնաւոր, նոյն առել՝ երգել. *թառ սակռու* եղանակաւորումն է: Այս սնով կ'երգուին գրեթէ բոլոր տեսակ գեղջուկ երգերը եւ մենեղի բնոյթ չունեցող վիպերգերը: *Խաղ սակռու* ձայնաւան ու սաղազափութիւնը նաւրուս է:

**Գ. Խաղ կանչել** կը նշանակէ՝ խաղաւոր, սնաւոր, նոյն կանչել՝ բարձրաձայն ու զարդարուն գեղգեղելով երգել: *Խաղ կանչեղը խաղ սակռուն* բնորոշակ ձեւն է: Այս սնով կ'երգուին, բայց մեծի մասին, մենեղերը, որոց ձայնելեւէջներն ան առել բնորոշակ սահման ու պոսոյսներ ունին, որպէս դիւցազներգութիւնները, վիպերգութիւնները, անտունիները, ողբերը եւ այլն:

Հայ եղանակներն ունին նոյն, ինքնատիպ տոնումներ եւ շեշտաւորումներ, որոնք, չափածոյ լինելով հանդերձ, ազատ ու անկախ են, հակառակ արեւմտեան երաժշտութեան, ուր յանգն ու շեշտ փոխադարձաբար կաշխանդում են: Հայկական երաժշտական յանգն ու շեշտ միասին կը կենդանացնեն մի սղնայիսի ձայնական տեսարան, ուր անաշխնը կը գծադրէ հոգու ու արտի յուզումներու տեսողութիւնները՝ համապատասխանաբար տոնումներով. իսկ երկրորդը կը նկարէ՝ քալին ու եռանդը՝ բազմատեսակ ու պերն ձայնաւանգներով:

Հայ գեղջուկ երգերն ունին այսպիսի շեղք.

*ա. Բուն երգ, որ կրկնակ չունի.*

*բ. Բուն երգ եւ կրկնակ՝ փոխ առ փոխ երգելի.*

*գ. Բուն երգ եւ կրկնակ՝ տոյ առ տոյ ու փոխ*

*առ փոխ երգելի եւ*

*դ. Երկու զանազան երգեր, որոնք հարց ու պատասխան են, կամ որ եւ է ներքին հանգամանքով են կապուած, առաջին, երկրորդ եւ երրորդ ձևերով փոխադարձաբար հիշատակով երգելի:*

Բուն երգը կ'ընդգրկէ եղանակի վիպականը, իսկ կրկնակը՝ հնարականը, որ գեղջուկ երաժշտութեան ոգին է. ուսի բուն երգի եղանակն անոն է, անպանոյն ու պարզ է՝ նման խօսելուն. իսկ կրկնակինը՝ ռնասո՞ր, զարդարուն եւ շարժուն:

Բուն երգի բանաստեղծութիւնը համեմուած է պատկերաւոր համեմատութիւններով. իսկ կրկնակինը՝ գոյնզգոյն բացազանչութիւններով կամ կարն ու կրտուկ նկարագրութիւններով: Առաջինը կը բացատրէ միտք, երկրորդը կը քարզմանէ զգացումները:

Գեղջուկը բնութեան հարազատ զուական է. ուսի հաշակել է բնութիւնը բովանդակ հոգեով ու սրտով: Իր երգերու մէջ բնութիւնը կը խօսէ. որովհետեւ բնութիւնն է նախ իր մէջ խօսած: Իր սրտի մէջ բնութեան ծովը կը յուզուի, վասն զի ինքն իսկ բնութեան ալիքներու վերայ կը դեգերէ: Իր երգերն իր կեանքն են, զի իր ամբողջ կեանքը իր երգերու մէջն

է ներճնչած: Վերջապէս, գեղջուկ երգերը սեսակ սեսակ ասուն հայելիներ են, որոնք զաս զաս, իրենց ծնունդ առած վայրերուն դիրքը, կլիման, բնութիւնը եւ կեանքը կանդրադարձնեն:

**ԿՈՄԻՏԵԱՍ Վ.Ա.ԲԴԱՊԵՏ**

1911, Մաս 20/2 Ապրիլ, Կ. ՊՕԼԻՍ

*ԾԱՆՕԹ.— Կոմիտաս Վարդապետ նախ պիտի է համառօտակի վերածի մեն մի երգի կազմութիւնը՝ բանաստեղծութիւնը, եղանակը եւ դաշնաւորումը եւ ապա երգուելու են :*

*Տեսրակիս երգերու մեծ մասն ասնուած է Կոմիտաս Վարդապետի եւ Մանուկ Աբեղեանի իմբացրած ժողովրդական « Հազար ու մի խաղ », երգարաններու Ա. եւ Բ. յիսնեակներէն: (Տպարան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1904 եւ 1905):*

Ի Ա Ս Ե Ա .

1 .

Կ Ա Լ Ե Ր Գ

Հօ՛, ոօ՛լ, օ՛, լօ՛, լօ՛, լօ՛, լօ՛:

Ա՛րի, ա՛րի, քե՛ մատաղ .

Հօ՛, ե՛զր, ջա՛ն,

Հօ՛, ոօ՛ւել, հօ՛,

Հօ՛, ոօ՛ւել, հօ՛:

Հա՛, կա՛լ արա, մա՛ն արա .

Հօ՛, ե՛զր, ջա՛ն,

Հօ՛, ոօ՛ւել, հօ՛,

Հօ՛, ոօ՛ւել, հօ՛:

Հա՛, կաղը դարման արա .

Հօ՛, ե՛զր, ջա՛ն,

Հօ՛, ոօ՛ւել, հօ՛,

Հօ՛, ոօ՛ւել, հօ՛:

Յորենն ինձ, դարմանը քեզ .

Հօ՛, ե՛զր, ջա՛ն,

Հօ՛, ոօ՛ւել, հօ՛,

Հօ՛, ոօ՛ւել, հօ՛:

Հաշանը դարման արա ,

Հաշանը դարման արա .

Պոե՛րե, հո՛ւմ, պոե՛,

Պոե՛րե, հո՛ւմ, պոե՛,

Պոե՛րե, զա՛ն:

### ՍԱՅԼԵՐԳ ՂԱԶԱԽ ԳԱԻԱՌԻ

Հօ՛լ արա , գո՛մէչ , ջա՛ն .

Հօ՛լ արա , գո՛մէչ , ջա՛ն .

Հօ՛լ արա , գո՛մէչ , ջա՛ն , հօ՛ .

Հօ՛լ ել , հօ՛լ ել , հօ՛լ ել , հօ՛լ ել .

Հօ՛ , զա՛ն , հօ՛ :

Թօ՛լ արա , գո՛մէչ , ջա՛ն .

Թօ՛լ արա , գո՛մէչ , ջա՛ն .

Թօ՛լ արա , գո՛մէչ , ջա՛ն , հօ՛ .

Հօ՛լ ել , հօ՛լ ել , հօ՛լ ել , հօ՛լ ել .

Հօ՛ , զա՛ն , հօ՛ :

## ՍԱՅԼԵՐԳ ՎԱՅՈՑ ԶՈՐԻ

Հօ՛ւ արա , Կ'ղօ՛ ,

Զա՛ն, ա՛ղբեր, ջա՛ն, հօ՛ ,

Թօ՛ւ արա , Կ'ղօ՛ ,

Զա՛ն, ա՛ղբեր,

Գե՛, սի՛րուն, Ե՛լ, Ե՛լ, Ե՛լ, Ե՛լ,

Գե՛, ծի՛րան, Ե՛լ, Ե՛լ, Ե՛լ, Ե՛լ,

Գե՛, սո՛կան, Ե՛լ, Ե՛լ, Ե՛լ, Ե՛լ, հօ՛ :

Հօ՛ւ արա աղբ ,

Զա՛ն, ա՛ղբեր, ջա՛ն, հօ՛ ,

Թօ՛ւ արա աղբ ,

Զա՛ն, ա՛ղբեր,

Գե՛, սի՛րուն, Ե՛լ, Ե՛լ, Ե՛լ, Ե՛լ,

Գե՛, ծի՛րան, Ե՛լ, Ե՛լ, Ե՛լ, Ե՛լ,

Գե՛, սո՛կան, Ե՛լ, Ե՛լ, Ե՛լ, Ե՛լ, հօ՛ :

2. Ա.

ՊԱՐԵՐԳ.

Հօ՛յ, նա՛զան իմ, նա՛զան իմ,  
Ջա՛ն, նա՛զան իմ, նա՛զան իմ,  
    Նա՛զան, դու բարով եկար,  
    Վանաչ սարերով եկար,  
    Խոր խոր ձորերով եկար:  
*Գարնան սիրուն ծաղիկ ես ,*  
    Հօ՛յ, նա՛զան իմ, նա՛զան իմ ,  
*Ինձ համար աղունիկ ես .*  
    Ջա՛ն, նա՛զան իմ, նա՛զան իմ,  
*Գրչխիս վերով պրտիս տուր ,*  
    Հօ՛յ, նա՛զան իմ, նա՛զան իմ,  
*Նախշուն թև թիթեռնիկ ես :*  
    Ջա՛ն, նա՛զան իմ, նա՛զան իմ:  
    Ճամբանց տրեւք՝ առաջ գամ ,  
*Սիրած եարիս բարեւ տամ .*  
*Ուխտ եմ արել , որ առնեմ ,*  
*Թող տեսնի աշխարհ ալամ :*  
    Սա՛րեր , ձո՛րեր , յետ կայէ՛ք ,  
*Իմ եարի ճամբէն բացէ՛ք .*  
*Ետք եարի ճեա խօսելիս ,*  
*Ակունջ արէ՛ք , խոսցէ՛ք :*

2. Բ.

ՊԱՐԵՐԳ

Փափուրի, ջան,  
Մըսայ պըլպուլի բաղը,  
Փափուրի, ջան,  
Երգեցի անու՛ճ սաղը:

Լուսնակը շող ա գցել,  
Ի՞ն՛ հարը քող ա գցել: .  
Փափուրի, եւայն:

Բարակ քամին տայիս ա,  
Ալ քողը դող ա գցել:  
Փափուրի, եւայն,

Ծամեր ունիս ծիրանի,  
Քամին տայ թեկ թեկ անի.  
Սիրուն աչերըդ հա՛րօ,  
Խեղք ու միտքս կը տանի:  
Փափուրի, եւայն:

3.

ՄՈԿԱՑ ՄԻՐԶԱ

ԴԻԻՑԱԶՆԵՐԳ

Օրն էր ուրբաթ ,

Լուս ի շաբաթ ,

Գեաշտ էրիր ենք Մալաքեաւէն .

Թըղթիկ մեկաւ Զըզիրու քաղքէն ,

Առին , բերին Մալաքեաւէն ,

Տուին ի ձեռ Մոկաց Միրզէն ,

Հազար ափսոս Մոկաց Միրզէն :

Առեց , կարգաց քաղցրիկ լեզուէն ,

էրաւ մաղղէն ,

Նըլեց աչքեր , կախեց չանէն ,

Քաղուաւ գոյն կամիր երեսէն :

Հազար ափսոս Մոկաց Միրզէն :

Կանչեց , ասաց իւր մըշակին ,—

Դու՛ս քաշի բող - բեզաւին ,

Վըրայ դըրէք թամբը սաղափին ,

Սաֆար կերթամ չուր Զըզիրէն :

Հազար ափսոս Մոկաց Միրզէն : Եւայլն

4. Ա.

ՀԱՐՍՆԵՐԳ

Առաւօտուն բարի լուս ,

Աստուած պահի ամենուս ,

Թող դուս գայ թըշնամու լուս ,

Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ.

Թող դուս գայ թըշնամու լուս ,

Լո՛րիկ, լո՛րիմ, լո՛րիկ, սի՛րուն լո՛րիկ,

Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիմ, լու՛ս լո՛րիկ:

Հազար երնէկ էն աւուր՝

Տաւուլ գուրնա չալեցուցին ,

Կանաչ կարմիր հաղեցուցին ,

Տարան ժամը կայնեցուցին ,

Աւետարան կարգացուցին ,

Ձեռք ձեռին տըլեցուցին ,

Տու՛յ, տու՛յ, տու՛յ, տու՛յ . . . . .

Լո՛րիմ, լո՛րիկ, սի՛րուն լո՛րիկ,

Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիմ, լու՛ս լո՛րիկ:

Առաւօտ բարի լուսուն ,

Քո հարան հարիր յիսուն ,

Համբ՛ի, դն՛ի վըր քուրսուն :

4. Բ.

ՊԱՐԵՐԳ

*Արեւը կայնէ կէս օր ,*

Պէ՛, ֆէ՛լէ, դէ՛, ֆէ՛լէ, Էա՛րօ, ջա՛ն.

*Իմ հարը կուգայ էս օր .*

Պէ՛, ֆէ՛լէ, դէ՛, ֆէ՛լէ, Էա՛րօ, ջա՛ն.

*Իմ հարի գալած ճամբէն ,*

Պէ՛, ֆէ՛լէ, դէ՛, ֆէ՛լէ, Էա՛րօ, ջա՛ն,

*Կը ցանկամ կարմիր մասոր :*

Պէ՛, ֆէ՛լէ, դէ՛, ֆէ՛լէ, Էա՛րօ, ջա՛ն:

5. Ա.

ԾԱՂՐԵՐԳ ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ

ԿԱԹ ԿԹԵԼՈՒ ԵՐԳ.

Հինգ էժ ունիս՛ ուր էժերով ,

Իլիլի, սիլիլի.

Կաթի կը կըթեմ ալըղնճներով ,

Իլիլի, սիլիլի.

Սեր կը չափեմ կաղի չափով ,

Իլիլի, սիլիլի.

Եղ կը հանեմ լըւի տըկով :

Իլիլի, սիլիլի:

5. Բ.

ՊԱՐԵՐԳ ԹԸՌՆՈՑԻ

Զա՛ր՝ զը՛նգը, զա՛ր՝ զը՛նգը, թո՛ղ զընգա-  
Պարենի գիշեր լուսնկայ:

*Էս գիշեր՝ լուսնակ գիշեր,*

Զա՛ր՝ զը՛նգը, զա՛ր՝ զը՛նգը, թո՛ղ զընգա-

*Զիւնն եկեր՝ գեալն նաչխեր:*

Պարենի գիշեր լուսնկայ:

*Էլի սարը բոլորաւ,*

*Եսարը միջին մոլորաւ:*

6.

ԱՐՐՐ ԵՒ ՏԱՏՐԱԿ  
(Ս.ՇՈՒՆԻ ԵՒ ԳԱՐՈՒՆԻ)

Երբն սասց տատրակ հաւքուն .  
Կնչի՞ կուլսս կուց կուց արիւն ,  
վժաց լլցուի բարակ առուն) :

Տատրակն սասց արօր հաւքուն .  
«Գրնաց գարուն , եկաւ աշուն ,  
Կըտրաւ ջրիկ աղբիւրներուն ,  
Կըտրաւ խոտիկ ձաղիկներուն ,  
Կըտրաւ ձէնիկ կաքաւներուն .  
Էնքան պիտի լամ երերուն ,  
Արիւն կաթէ լամ աչքերուն , —  
Ես ի՞նչ անեմ լամ ձագերուն) :

Սասց . «Դու մի՛ լա էս աշուն ,  
Չէ՞ վաղ կուգաց բարի գարուն ,  
Լոյս կը բացուի վեր աշխարհուն ,  
Դուռ կը բացուի խեղճիկներուն .  
Ես քեզ կարնեմ լամ թեքերուն ,  
Թըռնեմ բանձրիկ վեր ծառերուն ,  
Տանեմ , հանեմ վեր արարերուն ,

Բուն կը զընեմ մէջ քարերուն ,  
Տուն կը շինեմ մէջ գաղերուն ,  
Երթիկ բանամ դէմ հով քամուն ,  
Թոնիր թաղեմ մէջ այրերուն ,  
Ծուխ կը հանեմ հետ ամպերուն ,—  
Մեր ցաւ կը տանք հարաւ քամուն» :  
Գընաց աշուն , եկաւ գարուն ,  
Կաթէր ջրիկ աղբւրներուն ,  
Երթար լըցուէր բարակ սոուն .  
Աղբրանց - արիւն մէջ քարերուն ,  
Փունջ մանուշակ մէջ ձորերուն .  
Կանաչ կարմիր գոյն գոյն ծաղիլունք ,  
Դաշտերն ամեն էրունք , թըռչունք .  
Ձէնիկ կուգայ գառնիկ , մաքուն ,—  
Մեր սարելիք վեր Աստղծուն :



7. Ա.

ԾԱՆՐ ՊԱՐ

Այսպիսով սարն ամպիւ ա .

Վա՛յ, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛.

Աղբէր իր ձին թամբիւ ա :

Իմ մայրիկ ջան, իմ մայրիկ ջան:

Աղբէր իր ձին թամբիւ ա ,

Եարոջ գլունէն անցիւ ա :

Եարոջ գլունէն անցիւ ա ,

Ելի գաշտը՝ խաղցիւ ա :

Ելի գաշտը խաղցիւ ա ,

Անձրև եկե՛ թըրջիւ ա :

Անձրև եկե՛ թըրջիւ ա ,

Արև գարկե՛ չորցիւ ա :

Արև գարկե՛ չորցիւ ա ,

Քան կարմիր վարդ բացիւ ա :

7. Բ.

ՈՒՍ ՊԱՐ

Մեր զըռանը խընկի ծառ ,  
Գիւլուն՝ մ ջան ,

Ձեր զըռանը խընկի ծառ .  
Գիւլուն՝ մ ջան .

Խընկենին ա բերկ լար ,  
Գիւլուն՝ մ ջան .

Իմ խորտակ , պըզտիկ կար :  
Գիւլուն՝ մ ջան ,

Մեր զըռանը խընկի ծառ ,  
Նախշուն բըլբուլ վըրէն թառ .  
Երթար ու դար , չորոր տար ,  
Սիրուն կարին օրօր տար :

7. Գ.

ԹԵՒ ՊԱՐ

Շորորա, Անուե, ջան, շորորա:

Անուեի շորորով ես կորայ:

Վարդ եմ քաղկ շաղերով ,

Շորորա, Անուե, ջան, շորորա:

Վեր եմ զրբկ մաղերով .

Անուեի շորորով ես կորայ:

Մի ջուխոյ շամամ եմ կորցրկ ,

Շորորա, Անուե, ջան, շորորա:

Իրա կանաչ թաղերով :

Անուեի շորորով ես կորայ:

7. Դ.

ՓԱԹՊԱՐ

Հո՛վ, հո՛վ, հո՛վ լինի

Եարիս տունը ծո՛վ լինի.

Թո՛ղ, քո՛ղ, քո՛ղ լինի,

Եարքս քամարով լինի:

Դե՛՛ զանե՛՛ք, զանե՛՛ք, հողը հանե՛՛ք,

Մե՛ր քե՛նամու դողը հանե՛՛ք:

*Ծաղիկ և ծաղկանց միջին .*

Հո՛վ, հո՛վ, հո՛վ լինի,

*Մի հատ և աղջկանց միջին .*

Եարիս տունը ծո՛վ լինի.

*Ետ՛ր ինձ պարզերես արա ,*

Թո՛ղ, բո՛ղ, բո՛ղ լինի,

*Իմ ընկեր մարդկանց միջին :*

Եարբս քամարով լինի:

Դե՛, զանեք, զանեք, հողը հանեք,

Մեր քնամու դողը հանեք:

*Արի մի փաթպար խաղանք ,*

*Տընկող մընանք չը կաղանք .*

*Հարսանիքիդ այլուրը*

*Մուղնու ուխտեց վաղ աղանք :*

*Իրար հետ բազը զընանք ,*

*Ուտենք , խմենք , լիանանք ,*

*Թըչնամու աչքը հանենք ,*

*Մեր Աստղծուց գոհանանք :*

ՄԱՍՆ Բ .

1. Ա .

ԳՈՒԹԱՆԵՐԳ ՎԱՐԱՆԴԱՅԻ

Զի՛ց տու , քաշի՛ , ա՛յ եզը ,  
Ա՛րա , հօ՛ , հօ՛ , ա՛րա , հօ՛ .

Լուծրդ մաշի , ա՛յ եզը .  
Ա՛րա , հօ՛ , հօ՛ , ա՛րա , հօ՛ :

Աստուած պահէ քու տէրը ,  
Ա՛րա , հօ՛ , հօ՛ , ա՛րա , հօ՛ ,

Մինն էլ տաշի , ա՛յ եզը :  
Ա՛րա , հօ՛ , հօ՛ , ա՛րա , հօ՛ :

Մեր գութանը օղած ա ,  
Եզանց ուսը նօթած ա .

Վարէ՛ վարը , ա՛յ գութան ,  
Հազիւ խտիր դօղած ա :

Շողքն ընկաւ ծրմակին ,  
Աստուած կը տայ մըշակին .

Մուր գութանը ծիր գնաց ,  
Տէր - մըշակը քստակին :

Սերմէ՛ , սերմէ՛ , ա՛յ մըշակ ,  
Սո՛ւրբ ա , սո՛ւրբ ա քու փեշակ .

Մինը հազա՛ր տուր , Աստուած ,  
Բեզ ձէն կը տան տէր - մըշակ :

1. Բ.

ՔԱՂԼԱՆԵՐԳ.

*Քաղհանն կաննեմ հօ՛րսարով ,*

Եար, նայ, նայ, նայ, նայ, նայ,

*Տորմա կեփեմ թիրարով ,*

Սոնա եարբմ, նայ, նայ.

*Աչնանն անի լաւ օրեր ,*

Եար, նայ, նայ, նայ, նայ, նայ.

*Բամարակ քաղեմ նուրարով :*

Սոնա եարբմ, նայ, նայ:

2. Ա.

ԳԵՂՋԿԱԿԱՆ ՍԻՐԵՐԳ.

Կուժն առայ, կլայ սարը,  
Ձը գլտայ Ֆիլանն հարը,  
Ֆիլանն հարը ինձ տըւէք,  
Ձը քաչեմ ահ ու գարը:

Մեծ սարի հովին մեռնեմ,  
Շէկ տըղի բային մեռնեմ.  
Մի սարի ա չեմ տեսել,—  
Տեսնողի աչքին մեռնեմ:

Բըլբուլը գարի վերայ,  
Խնձորը սարի վերայ.  
Սիրած սիրածի տային,  
Ձոր գետնին՝ քարի վերայ:

2. Բ.

ԳԵՂՋԿԱԿԱՆ ՍԻՐԵՐԳ.

Սարէն ելաւ երկու մուխ ,  
Բոյիդ մեռնեմ,

Մինը հանդ ա , մինը ծուխ .  
Սոյիդ մեռնեմ.

Երկու սիրուն երեաց ,  
Բոյիդ մեռնեմ,

Մինը շէկ ա , մինը թուխ :  
Սոյիդ մեռնեմ:

Իմ հարն է շատ խորտախկ ,  
Աչքերը նուան հատիկ .

Աստուած սիրէք , աղբրրախկ :  
Ինձ տարէք հարիս մօտիկ :

2. Գ.

ԳԵՂՋԿԱԿԱՆ ՍԻՐԵՐԳ

Գընա՛ , գընա՛ , հետիդ եմ՝ ,

Հա՛ , հա՛ , հա՛ , հա՛ , հա՛ , հա՛ , հա՛ .

Սարիցօ , եա՛ր ջան ,

Եարիցօ , եա՛ր ջան .

Կարմիր խնձոր դօտիդ եմ՝ ,

Հա՛ , եարիցօ , եար ջան ,

Սարիցօ եա՛ր ջան :

Գու ինձ էս տեղ չես թողնի՛ ,

Որ տեղ երթաս մօտիդ եմ :

Ապարանը քարոտ ա՛ ,

Սիրուն կանաչ արօտ ա՛ .

Ուղիդ եօթը տարի ա՛ ,

Բոյրն աղբօրը կարօտ ա՛ :

3.

ԱՆՏՈՒՆԻ

Սիրտըս նման է էն փղած արներ,—  
Պտորեր գերաններ, խախտեր է սրներ .  
Բուն պիտի դրնեն մէջ վայրի հաւքեր .  
Երթամ՝ ձի թալեմ էն երման գետեր .  
Ընիմ ձրկներու ձագերացրն կեր :

Ա՛յ, so լա՛ն սրնաւեր:

Սև ծով մ'եմ տես , սպտակն էր բոլոր .  
Սլին կը գարնէր , չէր խառնի յիրոր .  
Էն ո՞րն է տես մէկ ծովն երկթաւոր,—  
Անտունի պիքան է պըղտոր ու մոլոր :  
Ա՛խ , իսկի մի՞ լնիք սըրտիք սևաւոր :

Ա՛յ, so լա՛ն սրնաւեր:

4. Ա.

ԴՐԺՈՒԱԾ ՍԷՐ

*Գարուն ա, ձիւն ա արեկ,*

Վա՛յ, լե, լե, վա՛յ, լե, լե,

Վա՛յ, լե, լե, լե, լե.

*Իմ եարն ա ինձնից սառեկ :*

Ա՛խ, չորնա՛յ, վա՛խ, ա՛յ եար,

Չար մարդու լեզուն:

*Քամին վրչում ա պաղ պաղ,*

Լերդ ու թռքս անում ա զաղ :

Եա՛ր, ինձ բէմուրատ արիւր, —

Սէրըդ ինձնէ գատ արիւր :

4. Բ.

ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ

*Կայնել ևս , կանչում էլ չես ,*

*Յա՛ր ,*

*Քոյէդ ամանչում էլ չես ,*

*Յա՛ր ,*

*Յար , նալ , նալ , նալ , նալ , նալ .*

*Նա՛լ , նա՛լ , նա՛լ , նալ , նալ , նա՛լ .*

*Նկար կըշտովս անց կացար ,*

*Յա՛ր ,*

*Տէր ևս , ճանանչում էլ չես :*

*Յա՛ր ,*

*Սև ամպը սարի գլխինն ,*

*Կաքաւը քարի գլխինն .*

*Չէ՞ , իրար խօսք ենք տըւել .*

*Էն բարձր դարի գլխինն :*

4. Գ.

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՊԱՐԵՐԳ.

(Ծաղրերգ.)

Խուճար պառկե երեսրաց ,

Հո՛ւպ, հո՛ւպ, հոպպրսա՛, դրմբա՛.

Գեղին կարպետ , բըմբուլ բարձ :

Հո՛ւպ, հո՛ւպ, հոպպրսա՛, դրմբա՛,

Հե՛՛յ, հե՛՛յ, լա՛ւն ե. հե՛՛յ, հե՛՛յ, լա՛ւն ե,

Հե՛՛յ, հե՛՛յ, լա՛ւն ե, հե՛՛յ, հե՛՛յ, լա՛ւնե:

Անուշ քրնէ երես բաց ,

Սահակն եկաւ խելք զընաց :

Հաջոնց կալը բոլորաբար ,

Խուճար մէջը կը խաղար :

Ծամեր թալուկ իւր յետե ,

Կը թըռւլըռէր շատ թեթե :

«Հաստա՛տ մընայ մեր հաջին ,

Որ պահէ մեր նոր փեփին» :

Գարնան բացուաւ նոր լալա ,

Խուճար բերաւ ջուխտ բալա :

Աչքըդ լոյս , հաջի աղա ,

Թուռներուդ հալաւ սրա :

5. Ա.

ԹԵՒ ՊԱՐ

*Սարը սարի նման չէ,*

Հօ՛յ, օրօ՛ր, աղիւնօ,

*Քարը քարի նման չէ.*

Հօ՛յ, օրօ՛ր, աղիւնօ,

*Հարան ու աղջիկ շատ տեսայ,*

Հօ՛յ, օրօ՛ր, աղիւնօ,

*Մէկն իմ հարին նման չէ :*

Հօ՛յ, օրօ՛ր, աղիւնօ,

5. Բ.

ԹԸՌՆՈՑԻ ՊԱՐ

Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր,  
Սո՛նա սիրուճ, Սո՛նա եա՛ր:

*Վարդապետը գայի ա ,*  
Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր,

*Ծաղիկը ցընծայի ա .*  
Սո՛նա սիրուճ, Սո՛նա եա՛ր.

*Այ գիւլում կանչող աղջիկ ,*  
Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր,

*Ջէնը ծղվըլայի ա :*  
Սո՛նա սիրուճ, Սո՛նա եա՛ր:

6.

ԳՈՒԹԱՆԵՐԳ ԼՈՒՈՒԱՅ ԳԱԻԱՌԻ

Հօ:—

*Օրհնեալ է Աստուած ,*

*Յիշեալ է Աստուած :*

Հօ, հօ, եօ - ա՛, հօ հօ՛ հօ՛, հօ՛, հօ՛.

Պռե՛րե, գոմե, հօ՛, հօ՛յ, եօ՛ - ա՛.

Ա՛ն, հա՛ գոմե, հօ՛, հօ՛յ, եօ՛ - ա՛.

Տա՛ր, հա՛ գոմե, հօ՛, հօ՛յ, եօ՛:

*Հուր լուսացաւ ,*

Հա՛, հա՛,

Փա՛նք եեզ, Տե՛ր.

*Բարին շատացաւ :*

Հե՛, հե՛, հե՛, հե՛, հօ՛, հօ՛յ.

եօ՛ - ա՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛.

Պռե՛րե, գոմե, հօ՛, հօ՛յ, եօ՛ - ա՛,

Ա՛ն, հա՛ գոմե, հօ՛, հօ՛յ, եօ՛ - ա՛.

Տա՛ր, հա՛ գոմե, հօ՛, հօ՛յ, եօ՛:

*Աղօթքան լուսուաւ ,*

Հա՛, հա՛,

Փա՛նք եեզ, փա՛նք.

*Մեր ժամը լրացաւ :*

Հե՛, հե՛, հե՛, հե՛, օ՛. հօ՛յ,

եօ՛ - ա՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛.

Պռե՛րե, գոմե, հօ՛, հօ՛յ, եօ՛ - ա՛.

Ա՛ն, հա՛ գոմեռ, հօ՛, հօ՛յ, եօ՛ - ա՛.

Տա՛ր հա՛ գոմեռ, հօ՛, հօ՛յ, եօ՛.

Պո՛ւրեհ, ջա՛ն, հօ՛, պո՛ւրօ, հօ՛, պո՛ւրօ, ջա՛ն-  
Հօօօլայ, հօօօլայ, քե՛ ղուրբան.

Շի՛մայ ջան, հօօօլայ, քե՛ մեռնիմ.

Լա՛յին ջան, հօօօլայ, հօօօլայ, հօօօլօ:

*Եզնարած քրնի,*

Հա՛, հա՛.

Վե՛ր կազեհ, գուրա՛նուր,

*Գուրանը քանի:*

Հե՛, հե՛, հե՛, հե՛, օ, հօ՛յ,

եօ՛ - ա, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛.

Պո՛ւրեհ, գոմեռ, հօ՛ հօ՛յ, եօ՛ - ա՛,

Ա՛ն, հա՛ գոմեռ, հօ՛ հօ՛յ, եօ՛ - ա՛.

Տա՛ր, հա՛ գոմեռ, հօ՛, հօ՛յ, եօ՛:

Պո՛ւրեհ, ջա՛ն, հօ՛ պո՛ւրօ, հօ՛, պո՛ւրօ, ջա՛ն-

Հօօօլայ, հօօօլայ, քե՛ ղուրբան.

Շի՛մայ ջան, հօօօլայ, քե՛ մեռնիմ.

Լա՛յին ջան, հօօօլայ, հօօօլայ, հօօօլօ:

*Գալիս, գալիս է,*

Հա՛, հա՛.

Ա՛յ, հըլլը՛ս, հըլլը՛ս,

*Աղը լալիս է.*

Հե՛ հե՛, հե՛, հե՛, օ, հօ՛յ,

եօ՛ - ա՛. հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛.

Պո՛ւրեհ, գո՛մեռ. հօ՛, հօ՛յ, եօ՛ - ա՛.

Ա՛ն, հա՛ գովե՛, հօ՛, հօ՛յ, եօ՛ - ա.

Տա՛ր, հա՛ գովե՛, հօ՛, հօ՛յ, եօ՛:

Հօ՛յ, դո՛ւ ելա՛, հօ՛, ա՛,

Հօ՛յ, դո՛ւ ելա՛, հօ՛, ա՛,

Հօ՛յ, դո՛ւ ելա՛, հօ՛, ա՛.

Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ,

Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ,

Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ,

Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ.

Հօ՛յ, ոա՛ւել ա, հօ՛, ա՛,

Հօ՛յ, ոա՛ւել ա, հօ՛, ա՛,

Հօ՛յ, ոաւել ա, հօ՛, ա՛.

Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ,

Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ,

Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ,

Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ:

Հօ՛, դո՛ւ ելա՛, հօ՛:

Օրհնա՛լ է Աստուած ,

Յիշեա՛լ է Աստուած :

Մաճկալը մաճին ,

Այ հորեւոր ,

Օղերն սկանջին :

Հօտայն է լալի ,  
Ք՛ել՛, ա՛յ լալիկ հօտադ,  
Միջակն է գալի :  
Վարենք՝ շատանայ ,  
    Տո՛կան ջան,  
Տէրն ուրախանայ :  
Թա՛վի տուր՝ թե արա ,  
    Ա՛յ խոփ ու ձեւիչ,  
Շուռ տուր՝ սե՛ւ արա :  
    և այլն . . . :

7.

ՍԻՓԱՆԱՅ ՔԱՁԵՐ

Քայլերգ .

Լօ՛ , լօ՛ , լօ՛ : Սէգ Սիփանայ սարի վերան  
Կըարիճներ շատարով գալիս են միանում .  
Այնտեղ անահ որդիք , անյաղթ բարձր լերան ,  
Զէնք ու զրահի են ընթանում :

Ինչո՞ւ վառւում են , զինւում ,  
Սանձակո՞ծ ձի հեծում անհամբեր ,  
Վառ արիւն է նոցա քաջ սրտի մէջ եռում ,

Թըռչում, անցում են ամպեր,  
Քան Սիփանայ պինդ քամին,  
Սըլանում են դէպ ի ցած,  
Դաշտի մէջ է թշնամին,  
Նա է վառում նորա վրէժն անմոռայ:  
Գազանաբար վատթար թըշնամին,  
Հատու սուսերը հանել,  
Հայ իշխանին է սպանել,  
Այս է վառում քաջերին:

Հայ որեարն էլ ոտի կանգնած՝  
Այժմ թշնամուն մահու, մարտի է կանչում,  
Մեծ վրէժ արեան վրէժ է նա պահանջում.  
Եւ թըշնամին պարտըւած,  
Թողնում, փախչում սարէ սար,  
Յետ է ձգում մեծ աւար:

Արիւն թափեցին, փոխանակ արեան՝  
Արիւն քամեց ծարաւի սուսեր,  
Սուրը յագեցաւ, յետ դրին պատեան,  
Ելնում են հիմայ սէգ Սիփանն ի վեր:  
Սէգ Սիփանայ կանաչ գլխին  
Հայ քաջերն անում են մեծ խնդում  
Եւ ամպերի թանձրութեան միջին  
Հրսկայ Սիփանն ամբողջ թընդում.  
«Էլ մօտ չեն գայ մեզ թշնամիք,  
Սուր տեսան մեր պողպատիկ»:

# Յ Ա Յ Տ Ա Գ Ի Բ

## Մ Ա Ս Ն Ա.

### 1. Կարեց եւ Սայեց.

Երկուքէն մինչեւ ուժածայն երկսեռ խումբ եւ մեներգ՝ Պ. Հ. Ս.

### 2. ա. Հօյ, նազան իմ.

Եռածայն արական խումբ.

### բ. Փափուրի.

Քառածայն երկսեռ խումբ.

### 3. Մոկաց Միբա.

Մեներգ դաշնակով՝ Կ. Վ.

### 4. ա. Առատօտն բարի լուս.

Մեներգ՝ Պ. Հ. Ս. եւ հնգածայն երկսեռ խումբ.

### բ. Արեւը կայնի կէսօր.

Քառածայն երկսեռ խումբ.

### 5. ա. Հինգ էծ ունիմ.

Հնգածայն երկսեռ խումբ.

### բ. Զա՛ր, զբնգը.

Քառածայն երկսեռ խումբ.

### 6. Արօր եւ սասրակ.

Մեներգ դաշնակով՝ Կ. Վ.

### 7. ա. Արագեազ սարն ամպի ա.

Եռածայն իգ. փոքր խումբ.

### բ. Մեք դրանք խնկի ծառ.

Հնգածայն իգական խումբ.

### գ. Ծորոտա. Անուտ.

Քառածայն երկսեռ խումբ.

### դ. Հով, հով, հով լինի.

Հնգածայն երկսեռ խումբ եւ մեներգ՝ Կ. Վ.

**ԾԱՆՕԹ.** Յայտագրիս բոլոր երգերը գրի առել եւ դաւեմակել է Կոմիտաս Վարդապետ :

## Մ Ա Ս Ն Բ.

- |   |  |
|---|--|
| <p><b>1. ա.</b> Չի՛ց տու, քա՛ցի, ա՛յ եզբ.</p> <p style="padding-left: 2em;"><b>բ.</b> Բաղիան կսկեմ.</p>   | <p><i>Քառածայն երկսեռ խումբ.</i></p> <p><i>Վեցածայն երկսեռ խումբ.</i></p>                                      |
| <p><b>2. ա.</b> Կուժն առայ, ելայ սարբ.</p> <p style="padding-left: 2em;"><b>բ.</b> Սարէն ելաւ երկու մուխ.</p> <p style="padding-left: 2em;"><b>գ.</b> Գնա՛, զնա՛, էհիտի եմ.</p>   | <p><i>Քառածայն երկսեռ խումբ.</i></p> <p><i>Վեցածայն երկսեռ խումբ.</i></p> <p><i>Վեցածայն երկսեռ խումբ.</i></p> |
| <p><b>3. Անտունի.</b></p>   | <p><i>Մենեքզ դաշնակով՝ Կ. Վ.</i></p>   |
| <p><b>4. ա.</b> Գարուն ա, ձիւն ա արեկ.</p> <p style="padding-left: 4em;"><i>Եռածայն եւ վեցածայն երկսեռ խումբ.</i></p> <p style="padding-left: 2em;"><b>բ.</b> Կայնիկ ես, կունչում էլ չես.</p> <p style="padding-left: 2em;"><b>գ.</b> Խումար.</p> <p style="padding-left: 4em;"><i>Երկնայն իզական եւ վեցածայն երկսեռ խումբ.</i></p> | <p><i>Քառածայն երկսեռ խումբ.</i></p> <p><i>Վեցածայն երկսեռ խումբ.</i></p> <p><i>Մենեքզ դաշնակով՝ Կ. Վ.</i></p> |
| <p><b>5. ա.</b> Սարբ սարի նման չէ.</p> <p style="padding-left: 2em;"><b>բ.</b> Սոնա.</p>  | <p><i>Քառածայն երկսեռ խումբ.</i></p> <p><i>Վեցածայն երկսեռ խումբ.</i></p>                                      |
| <p><b>6. Գուրաներզ.</b></p>   | <p><i>Մենեքզ դաշնակով՝ Կ. Վ.</i></p>   |
| <p><b>7. Սիփանայ քաջեր.</b></p>   | <p><i>Քառածայն երկսեռ խումբ.</i></p>   |

Իւրաքանչիւր երգի կազմութիւնը — բանաստեղծու թիւեր, եզանակը եւ դաճաւորումը — նմալ պէ՛տ է մի առ մի վերլուծել **Կամիսաւ Վարդապետ**։

ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԳԱՄՔ

Հ Ա Ս Ս Ա Տ Ե Լ Ի

ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱՆՈՅԻՆ



Տ Ե Ա Ր Ք

ԱՐԱՄ ՀԱԼԱՃԵԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՀԱՐԷՆՅ

ԱՐՄԷՆ ԱՐՄԷՆԵԱՆ

ԵԳՈՒԱՐԳ ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ

ՄԱՐԹԷՆ ՅԱԿՈԲԵԱՆ

ՄԱՐՏԻԿ ԷՆՔՍԷՐՃԵԱՆ

ՄԻՍԱԿ ԱՇՃԵԱՆ

Sof. ՎԱՀՐԱՄ ԹՈՐԳՈՄԵԱՆ

